

Եփեսացիս 2:8,9 (Ephesians 2:8,9)

«Աստուծոյ Շնորհքը»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 06.02.02

Նկատի պիտի առնենք Եփեսացիս 2:8,9 համարները:

Զոյգ մը այցելեցին որբանոց մը: Տնօրէնէն խնդրեցին որ ամէնէն դժուար որբը իրենց տայ: Արդէն իրենք ունէին իրենց սեփական գաւակները, սակայն կուզէին տկար որբի մը օգնել:

Տնօրէնը իրենց ցոյց տուաւ մանչ մը որ ունէր շատ մը տկարութիւններ՝ թէ ֆիզիքական եւ թէ մտային: Անունը John էր, սաստիկ անհանդարտ ու չար էր, նաեւ մէկ ոտքը ծուռ էր. յանախ վախով ու պոռալով կարդնար գիշերը՝ գէշ երազ տեսնելով:

Տնօրէնը հարցուց *«Իսկապէս կուզէ՞ք այս մանչը.»* պատասխանը եղաւ *«Որոշապէս այ՛ն:»*

Կրցին որդեգրել Johnը եւ զինք իրենց տունը տարին: Երբ հասան հսկայ թուղթի մը վրայ գրուած էր *«Բարի եկար John»* եւ բոլոր պգտիկները ուրախութեամբ ընդունեցին զինք: Հայրը ըսաւ Johnին, *«Ինչո՞ւ հիմա մեր գաւակն ես, մենք քեզ կը սիրենք քու սենեակդ կից է մեր սենեակին, երբ գիշերը վախնաս կրնաս մեր մօտ գալ: Վաղը քեզ բժիշկի պիտի տանինք որ ոտքդ դարմանէ: Միայն մէկ բան կը պահանջենք քեզմէ որ ըլլաս բարի եւ ազատիս չար վիճակէդ: Մենք քեզ սիրով պիտի խնամենք:»*

Եփեսացիս 2:8,9 Պօղոս առաքեալ Աստուծոյ սէրը կը նկարագրէ՝ մեզի հանդէպ: *«Վասնզի շնորհով փրկուած էք դուք հաւատքի միջոցով եւ այս ո՛չ թէ ձեզմէ է, հապա Աստուծոյ պարգեւն է. Ո՛չ թէ գործերէն որ մէ՛կը չպարծենայ:»*

Մենք ալ որբ ենք, միմեկ մեղքի մէջ, առանց յոյս ունենալու թէ Աստուծոյ ընտանիքին կը պատկանինք: Արժանի չենք Աստուծոյ փրկութեան: Փրկութիւնը մեր չանփով չենք կրնար ձեռք ձգել: Աստուած է որ մեզի կուտայ փրկութիւնը ձրիօրէն: Երբ կը՛նդունինք Յիսուս որպէս մեր Փրկիչը՝ հաւատով՝ ընդունած կըլլաք Աստուծոյ ձրի պարգեւը: Եւ Իր ընտանիքին անդամ կըլլանք:

Սեպեմբերի 5, 2000 թվականին ունիս. եւ մէկը քանի check մը կ'ուտայ այս գումարով: Կրնա՞ս հպարտ զգալ այս օգնութեամբ:

Յանախ հպարտ կը զգանք. կը խորհինք թէ մեր ջանքով փրկութիւն ստացանք: Կանտեսենք Սուրբ Գիրք կարդալ, աղօթել, Տէրը պաշտել, ծառայել եւ հաղորդակցիլ: Կը մոռնանք մեր Փրկչին աննման գոհողութիւնը, երբ մեզի համար Իր պատուական արիւնը թափեց: Որպէս Հայ, կը սենք մենք Քրիստոնեայ ազգ մըն ենք - այս իսկ Աստուծոյ շնորհքն է: Երբեմն կը խորհինք թէ մենք հասուն հոգեւորներ ենք, եւ նոյնիսկ մենք զմեզ բարձր կը դասենք ուրիշներու հոգ: Պէտք է յիշենք թէ մենք մանուկներ ենք Աստուծոյ հոգ:

Աստուած մեզ լաւ գիտէ. մեր սրտերն ու մտքերը կը կննէ: Ան կուզէ որ մենք բաց սրտով ընդունինք Իր շնորհքը: Այս շնորհքն է որ կ'ստիպէ մեզ որ ըլլանք խոնարհ, եւ թոյլ տանք որ Աստուած մեր կեանքերուն մէջ ներգործէ: Երբ Աստուծոյ շնորհքը մեր մէջ կը գործէ, կրնանք հասնիլ ուրիշներուն որոնք նեղութեան մէջ են: Առաւել՝ կրնանք օգտակար ըլլալ շատերու որոնք տակաւին անծանօթ են Աստուծոյ սիրոյն եւ շնորհքին:

Աղօթք...

Միքելի Երկնաւոր Հայր, կը խնդրենք քեզմէ որ օգնես մեզի որ խոնարհ մնանք: Քու շնորհգիտ պէտք ունինք որ մնանք հաւատարիմ քեզի: Միայն քու շնորհգով կրնանք խոսք տարածել եւ օգտակար ըլլալ շատերու:

Կ'աղօթենք, Յիսուս Քրիստոսի Անունով. Ամէն: